



ԳՐԱԽՈՍԱԿԱՆ

«ԸՆՏՐԵԱԼԴ ԱՍՏՈՒԾՈՅ»

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ Դ. ԴԱՐԷՆ
ՄԻՆՉԵՒ ՄԵՐ ԺԱՄԱՆԱԿԸ

Նոր գիրք մը, գրուած անգլերէն լեզուով, հրապարակ կը մտնէ, մեր Արեւելեան Թեմի կից «Գրիգոր եւ Գլարա Զօհրապ Տեղեկատուութեան Կեդրոն»ի հրատարակչական ջանքերով: Կը կրէ անսովոր վերնագիր՝ «Ընտրեալդ Աստուծոյ» (Chosen of God) որուն հովանիին ներքեւ կը ներկայացուին Հայ Եկեղեցոյ թով 130 Ամենայն Հայոց Կաթողիկոսներու ընտրութիւններն ու կերպընթացները՝ Դ. դարէն մինչեւ մեր օրերը, 17 երկար դարեր:

Վերնագիրին բառերը մէջբերուած են այն երգէն զորս եկեղեցոյ դպիրները կ'երգեն. «Ընտրեալդ Աստուծոյ, ով երջանիկ սուրբ հայրապետ...», Ս. Խորանի մեծ վարագոյրի քաշուելէն ու մեղեդիի երգելէն առաջ, երբ պատարագիչ Եպիսկոպոսը Խորանին առջեւ ծունկի կուգայ եւ կը կարդայ Ս. Հոգիին ուղղուած աղօթքը, ծածկաբար:

Առաջադրուած նիւթն ու անոր ծրագրումը բաւական յանդուգն նախաձեռնութիւններ են: Մինչ ուրիշներ՝ կը տառապին ժամանակի վրիպանքէն, այս մէկը կը յատկանշուի իր այժմեականութեամբը: Արդարեւ, ողջ հայութիւնը՝ Մայր Հայրենիքի, նախկին Սովետական տահմաններուն մէջ եւ մեր՝ ընդարձակ Սփիւոքի տնարածքին, հոգեպիւնդ կը պատրաստուի սա յառաջիկայ Ապրիլ Յին, ընտրելու իր Ամենայն Հայոց Կաթողիկոսը, Ս. Գրիգոր Երկրորդ Լուսաւորչի Գահուն՝ 131-րդ յաջորդը անընդմիջաբար շարունակութեամբ: Այս լոյսին տակ՝ վերնագիրը՝ կը դադրի անսովոր ըլլալէ. եւ հեղինակին վկայութեամբ, ան այլեւս իր մէջ կը պարագրկէ այն հաւատքը թէ Հայ Եկեղեցոյ գերագոյն հովուապետին ընտրութիւնը պարզ քուէներու առաւելութիւն մը չէ լոկ, այլ՝ Աստուծոյ եւ Ս. Հոգիին կամքին ու միջամտութեան իրագործումը Հայ Եկեղեցոյ մէջ: Մարդկային ըլլալէ աւելի աստուածընտիր արարք մը պատշաճ եւ տպաւորիչ է գրքին նակատը զարդարող վերնագրին նախընտրանքը:

Հեղինակը՝ Հոգ2. Տոքթ. Գրիգոր Վրդ. Մագսուտեան, հայ բանասիրութեան ծանօթ է հայ պատմութեան մասին իր ունեցած լայն ծանօթութեամբը. հեղինակ՝ համանման աշխատանքներու եւ տեսուչն ու պատասխանատուն՝ վերոյիշեալ Տեղեկատուութեան Կեդրոնին: Հրամանովն ու քաջալերութեամբը թեմիս Առաջնորդին՝ Գերշ. Տ. Խաժակ Արք. Պարսամեանին:

Հրատարակութեան ծախքը՝ հանգուցեալ Տ. Զգօն Եպս. Տէր-Յակոբեանի նիւնադրամէն:

Էջերով 194 այս աշխատասիրութիւնը կարդացի միաշունչ, առանց ընդմիջումի: Ինծի համար անոր ընթերցումը հետաքրքրական ըլլալով մէկտեղ՝ եղաւ գրաւիչ, որովհետեւ դէպքերու եւ անձերու մասին արդէն իսկ ունեցած ծանօթութիւններս, այս գրքով կը ներկայացուէին տրամաբանական տարազներով, հետազօտական ճշդումներու պաշտպանութեամբ եւ համոզելիութեամբ: Ուժգնապէս կը յանձնարարեմ կարդալ զայն. ի վերջոյ բոլորս ալ անգլերէն կը կարդանք: Կրկնութիւններ չկան, այլ հաստատումներ, նոր ձեւով ըսուած: Ամերիկածին մեր տղաքը երբ կարդան անտարակոյս պիտի հանդիպին թանկագին տեղեկութիւններու որոնք պիտի ծառայեն անոնց մէջ հետաքրքրելու իրենց ծնողներուն եւ նախածնողներուն հայադրոշմ հաւատքը:

Տեղեակ եմ այդ գրքին հայերէն թարգմանութեան, որ համընթացաբար կատարուած ու պատրաստուած է Երեւանի մէջ արեւելահայերէնով: Կ'արժէ կարդալ այդ թարգմանութիւնը, մասնաւորաբար գնահատելու՝ թէ որքան արդարութիւն ըրած է բնագրի լեզուին:

194էն 141 էջերը, որոնք կը պարունակեն գրքին կեդրոնական թեման, պարտականութիւնը ստանձնած են քալ ատ քալ թելու եւ նկարագրելու կաթողիկոսական 130 ընտրութիւններու կերպընթացները: Յաջորդ 53 էջերով հոգեշնորհ հեղինակը սպառիչ աշխատանք տարած է բնագրի նօթագրութիւնները (թով 333) պատրաստելով: Ապա 164—183 էջերով կցուած են եօթ Յանելուածներ. 1) Պալաժէնիայի բնագրին գրաբարը. 2) Նոյնին աշխարհաբար թարգմանութիւնը. 3) Աշխարհական պատգամաւորներու ուխտատոյթեան հայերէն բնագիրը. 4) 1925ին վաւերացուած մասնաւոր Կանոնադրութեան հայերէն բնագիրը. 5) 1945ին վաւերացուած մասնաւոր Կանոնադրութեան հայերէն բնագիրը. 6) Կաթողիկոսներու ցանկը. 7) Մայր Աթոռի իրաւասութեան տակ եղող պատրիարքութիւններէն եւ թեմերու ցանկը: Վերոյիշեալ թուումները յիշեցի այստեղ անոնցմէ ամէն մէկուն ունեցած կարեւորութիւնը ցոյց տալու նպատակով, որովհետեւ անոնցմով հայթայթուած տեղեկութիւնները կը նպաստեն կաթողիկոսական ընտրութեան ուղիղ ըմբռնումին: Վերջապէս 183—194, զետեղուած է մատենախօսութեան բաժինը, ուր արձանագրուած են այբուբենական կարգով անունները այն գրքերուն որոնք օգտագործուած են իբրեւ աղբիւր այս ուսումնասիրութեան պատրաստութեան: Ասիկա ընդունուած կերպ մըն է զոր հեղինակներ պարտին գործադրել:

Ուշիմ եւ ուշադիր ընթերցումով նախ դժուար պիտի չըլլայ հաստատել որ «Ընտրեալդ Աստուծոյ»ն պարզ շարադրական աշխատանք մը չէ: Երկրորդ, այնտեղ չեն պակսիր եւ իբրեւ ուղեցոյց գործածուած են տուեալներ՝ քաղուած հայ եւ օտար դասական աղբիւրներէ. առաւել, ժամանակակից ուսումնասիրողներէն յայտնաբերած թանկագին նորութիւնները որոնք նոր ճշդումներ կը թելադրեն: Հոգեշնորհ հեղինակը խղճմտօրէն օգտագործած է զանոնք բանասէրի մը բժախնդրութեամբ: Երրորդ, պէտք է շեշտել որ իր մէջբերումներն ու անոնց առիթով՝ իր մեկնաբանութիւնները կը մնան թաւաւուն՝ հայ պատմութեան գրին ու ոգիին եւ աւանդութիւններուն հաւատարմութեամբը:

Ըրի այս հաստատումները որովհետեւ ծանօթ եմ համանման նկարագրով նորայայտ աշխատասիրութիւններու, ուր դէմքեր եւ անոնցմով պայմանա-

որ պատմական իրադարձություններ խմբագրուած են շարադրութեան մը պարզութեամբ: Երկրորդ, անմասն հոգելոյս Օրմանեան պատրիարքի ծաւալուն «Ազգապատում»ը, գանձարան՝ տեղեկություններու եւ աղբիւրներու, ուր սակայն կը պակսին նորագիտ պըրպըտումներու արդիւնք՝ նոր ստուգումներ: Չմոռնալ որ շուտով դար մը անցած պիտի ըլլայ «Ազգապատում»ի խմբագրութենէն ասդին: Կան Վենետիկի Միսիթարեաններէն Հայր Վարդան Հացունիի համանուն ուսումնասիրութիւնը, անկէ առաջ ալ Հայր Միքայէլ Չամչեանի «Պատմութիւն Հայոց»ը, երկուքն ալ հարուստ, արժէքաւոր աշխատասիրութիւններ, որոնց եւս կը պակսին նորայայտ տոութալներու նպաստը: Երրորդ, չեմ կրնար չանդրադառնալ սոյն հայրերուն ցուցաբերած դէպքեր ու դէմքեր լատինամէտ մեկնաբանութիւններով ներկայացնելու ճիգերուն, իրենց այլապէս շատաշատ աշխատանքներուն մէջ:

Հետաքրքրական է Բովանդակութեան ցանկը, որ ստորաբաժնուած է 15 գլուխներու: Այստեղ օգտագործուած է պատմական գլխաւոր շրջաններու բաժանման դրութիւնը ուր տեղադրուած են ժամանակագրական կարգով կաթողիկոսներ՝ որոնք նոյն ժամանակաշրջանի մը ընթացքին շնչած են նոյն մթնոլորտի բարիքներն ու չարիքները: Եւ կը կարծեմ որ այս դրութիւնը կը թուի ըլլալ անելի տրամաբանական եւ գործնական ռեւէ տեսակի ընթերցողի համար: Կը յիշեմ «Ազգապատում»ի ծաւալուն երեք հատորները, ստորաբաժնուած՝ 126 ժամանակաշրջաններու, 126 կաթողիկոսներու անուններով, նախալուսաւորչեան թուականներէն մինչեւ Տ. Մատթէոս Բ. Իզմիրլեան, 20րդ դարու առաջին տասնամեակը: Թերեւս լուսահոգի Ամենապատիւ հեղինակը նախընտրութիւն մը ունէր իր մտքին մէջ ստորաբաժանման այդ դրութիւնը գործածելով: Սակայն այսօր տարբեր են այդպիսի մերձեցման մը պայմանները. կը նախընտրենք պատմական շրջաններու դիմելու կերպը: Ազգապատումի մէջ իւրաքանչիւր կաթողիկոսի անուն տակ երկսրապատում ստորաբաժանումներն ու այլ պատմական ներառումները յաճախ կրկնութիւններ կը գոյացնեն եւ պատճառ կ'ըլլան ետուտառ ընթերցումներ կատարելու դժուարութիւններու, որոնք խճողում կ'ստեղծեն ընթերցողներու մտքին մէջ:

Մեր երկարաձիգ պատմութեան բոլոր շրջանները ունեցած են իրենց դժուարութիւնները. սակայն երկու շրջաններ որոնք զիս շատ կը յուզեն, կը յատկանշուին առաւելաբար իրենց եղեռնական արդիւնքներով, որոնց եւս ենթարկուած է Հայ Եկեղեցին իբրեւ յաւիտենական բաժնեկից: «Ընտրեալդ Աստուծոյ»ի հոգեշնորհ հեղինակը իր թեզի զարգացման ընթացքին Բաւական կը յամենայ քաղաքական անցուդարձերու մասին, որպէսզի այդ բոլորին ընդմէջէն կարենայ վերագտնել հայ կաթողիկոսներու ընտրութեան կերպընթացին թելը:

Անոնցմէ մէկը, «Կաթողիկոսներու ընտրութիւնը՝ քիզանդական իշխանութեան ներքեւ» գլուխ 6: Բիզանդացիներու կողմէ Անիի գրաւումէն (1045) մինչեւ Տ. Գրիգոր Բ. Վկայասէր կաթողիկոսի ընտրութիւնը (1066), ամբողջ 20 տարիներ, մեր պատմութեան յուսակտուր շրջաններէն մին կը կազմէ: Հայ պետականութիւնը՝ կործանած, հայ իշխաններ՝ ցանուցիր, եւ Հայ Եկեղեցին՝ իրողապէս (defacto) ջնջուած: Անիծեալ քաղկեդոնական վէճերը եւ առ այդ քիզանդացիներու տմարդի ճընշումները, Պետրոս Գետադարձ կաթողիկոսի սրտաբեկ մահը (1057) եւ անոր ձեռնասուն՝ Խաչիկ կաթողիկոսի մահը 1065ին, Գրիգոր Բ. Վկայասէրի կաթողիկոսացումը 1066ին, եւ հայուն մէջ վեց կաթողիկոսներու գո-

յութինը նույնժամայն, ստեղծած էին տարանջատական ու անիշխանական կացութիւն մը:

Միւսը. «Կաթողիկոսներու ընտրութիւնը՝ կիլիկեան թագաւորութեան անկումէն վերջ». գլուխ 9: 1375ին Սիսը կը գրաւուի Եգիպտոսի մամլութներու կողմէ. վերջին հայ թագաւոր՝ Լեւոն Լուսինեան. եւ կաթողիկոս Կոստանդին Ե. գերի կը տարուին Եգիպտոս. Կիլիկիոյ մէջ իրերայաջորդ կաթողիկոսներու իրարու ձեռքէ իշխանութիւն կորզելու դաւադրութիւնները. անոնց հետեւանքով կաթողիկոսներու թունաւորմամբ սպաննութիւններ, եւ այլ քայքայիչ դէպքեր, մաս կը կազմեն այդ շրջանին մինչեւ Աթոռի փոխադրութեան թուականները: Շատ են մանրամասնութիւնները. տխուր եւ զայրալցուցիչ:

Արդ, զուտ քաղաքական նկարագիր ունեցող այս դէպքերէն ընդմէջէն, պէտք է շեշտեմ այստեղ որ, հոգեշնորհ հեղինակը կրցած է մնալ զուսպ եւ չնապաղիլ քաղաքական անհատնում մանրամասնութիւններուն մէջ, շուտով կաթողիկոսական ընտրութեան թելը կրկին վերցնելով: Աշխատած է չշեղիլ իր առաջադրած թեզին սահմաններէն: Շատ են թյուականներ եւ անուններ, որոնց մէջ կարելի եղած է պահպանել դէպքերու տրամաբանական ընթացքը: Եւ ասիկա ուրիշ մը՝ կատարուած ուսումնասիրութեան առաւելութիւններէն:

Գիրքը կարդալու համար անպայման ուսումնական մը ըլլալու պէտք չկայ: Ան գրուած է նաեւ բոլոր անյոնց համար, որոնք կը սիրեն կարդալ, եւ մօտէն ծանօթանալ Հայ Եկեղեցոյ պատմութեան, եւ կաթողիկոսական ընտրութեան կերպերու ստացած զարգացման, անցնող 17 դարերուն: Այս է նպատակը եւ ակնկալած վարձատրութիւնը հոգեշնորհ հեղինակին:

ԳՐԻԳՈՐ ՈՍԿԱՆԵԱՆ

Մարտ 1995

Նիւ Եորք

